

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՒԳՈՐ ԸՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից).

Յայտարարությունը ընդունվում է ամեն լիցիտով.

Յայտարարությունների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱՎՈՐԻՒՆ

Մեր երկրասարգութիւնը.—Ներքին Տե-
ղովութիւն. Արձագանքներ. Նամակ Դազարի
գաւառից. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ձիւնական
գործերը.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Միջազգային կոնգրէսները Պարիզում.

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆ

„Մշակի“ ներկայ համարում մենք տպա-
գրում ենք մեր խմբագրութեան ուղ-
ղած մի նամակ, որ ստացել ենք Ալեքսան-
դրովից և որի մէջ դուք կը գտնէք մի
վերին աստիճանի անպատիւ, ամօթալի
փաստ մեր ներկայ երկրասարգութեան
խանրից: Դէպքը խնայելի, մի ընդհանուր
կրեւոյթի բնաւորութիւնը չունի. բայց մի
դէպք է դա, որը կարելի է դնել ուրիշ
տեսակի դէպքերի հետ և աղբյուրով մի
բաւական համոզիչ պատկեր կազմել...

Այդ պատկերը այնպիսին է, թէ, որ
ընդունակ լինէր որ և է հաւատ ներշնչ-
ել, թէ մեր հասարակութեան մէջ կան
շատ առողջ տարրեր և այդ տարրերի
վրա պէտք է հիմնել մեր առաջագիտու-
թեան, մեր երջանիկ ապագայի յոյսերը:
Եւ ճիշդ, իրաւունք ունի՜ լաւ օրի սպա-
սելու մի ժողովուրդ, որի թաւը, երկա-
տարը ոյժերը այսօր՝ Բագուում կամ Նաւթ
են գոյանում կամ հիմնաւորապէս կո-
ղպաւում արհեստաւոր, մշակ մարդկանց
գրգռանքը, փողը, Ալեքսանդրովիւմ
հալածում են մի կաթօլիկի, իսկ առհա-
տարակ մենք չունենք գաղափարական
ձգտումներ, նիւթապաշտ են ու եսամոլ:
Արասներով զարդարուն ծաղիկներ ունենք.
Եւ ժամանակի ոգու, առաջագիտող մարդ-
կութեան առաջ մենք կարող ենք միայն
ամօթով ցած նայել...

Այո, մեր գրութիւնը այսպէս է: Նայե-
ցէք համաշխարհային պատմութեան վրա,
ծանօթացէք ամեն մի մտաւոր վերածնու-
թեան հետ, տեսէք ամեն մի ընդհա-
րում, որի մէջ լոյսը պիտի յաղթէ խա-
ւարին. ամեն տեղ և ամեն ժամանակ
փառաւոր յաղթանակների կողմէ է եղել
երկրասարգութիւնը, ամեն անգամ վճի-
րը թողնված է եղել եռանդի, տաք և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍՆԵՐ ՊԱՐԻԶՈՒՄ

III

Վաճառականութեան և արդիւնաբերութեան
միջինատր Միջըրանի վաւերացած ծրագրի հա-
մաձայն մասնուի VII միջազգային կոնգրէսը
պէտք է բացվի յուլիսի 29-ին և փակվի
օգոստոսի 2-ին, իսկ օգոստոսի 3-ից մինչև 18-ը
պէտք է տեղի ունենային ճանապարհորդութիւն-
ների գէպի գաւառները, այցելութիւններ Պա-
րիզի և Ֆրանսիայի նշանաւոր և պատմական
վայրերին: Կոնգրէսի հանգիստաւոր բացումը
պէտք է տեղի ունենար Սորբոնի մեծ սրահում,
Ֆրանսիական հանրապետութեան նախագահ
Լուրէի ձեռքով, յուլիսի 31-ին: Ընդհանուր
ժողովների համար կոնգրէսն ունէր արդէն իր
անկախ պալիլիօնը ցուցահանդէսում, որ
կոչվում է Pavillon de la Presse à l'Expo-
sition.

Յուլիսի 29-ին, կէսօրից յետոյ, մասնուի
պալիլիօնում բաժանվելին կոնգրէսի անդամ-
ներին օրակարգի թերթերը, մի մի օրինակ
այն զեկուցումներից, որոնք պէտք է առա-
ջարկվէին կոնգրէսի ընթացքին, և ապա հրա-
ւիրներ այն բոլոր հանդէսների, ճաշերի, նախա-
ճաշերի, ցերեկոյթների և երեկոյթների համար,
որոնք պէտք է տեղի ունենային ի պատիւ
կոնգրէսիանների: Այսպէս, օրինակ, յուլիսի

աշխոյժ արեւելի ներկայացուցիչ սերունդին
Իսկ ի՞նչ է հայ երկրասարգութիւնը մեր
ժամանակներում, երբ կայ լոյսի և խաւա-
րի կուրը, երբ դեռ շատ ու շատ յաղթա-
նակների ենք մենք կարօտ:

Այս էջերում, ուր գրում ենք ներկայ
տողերը, մեզ շատ է շատ անգամ է վի-
ճակվել տիտուր պարտաւորութիւն՝ արձա-
նագրել մեր, իբր թէ թարմ, ոյժերի կա-
տարեալ անակոթութիւնը, ծայրայեղ ան-
բարեխղճութիւնը: Բայց, ինչպէս տեսնում
ենք, դեռ երկար պիտի կատարենք այդ
ծանր պարտաւորութիւնը, դեռ երկար
հարկադրված կը լինենք մերկացնող գրիչ
գործադրել, այն էլ ուժ չէ՜—այն իսկ
սերունդի դէմ, որ ինքը պիտի լինէր ամեն
մի խաւար երեւոյթի անհաշտ թշնամի,
կռող, մերկացնող մի ոյժ: Եւ ի՞նչ տիտուր,
յուսահատական գրութիւն մի հասարա-
կութեան համար, երբ խաւարի ու յետա-
դիմութեան տարեգրութիւնները—նրա
երկրասարգութիւնն է ստեղծում:

Մինչեւ այժմ մեր առջեւ կար փողի ու
դիրքի համար ամեն ստորութիւններ գոր-
ծող երկրասարգ սերունդ: Այժմ այդ
զղուելի տիպի վրա աւելանում է մի աւելի
ևս զղուելի տիպ—միջնադարեան տգէտ
ու չարագործ կղերի մոլեռանդութեամբ
վարակված մի երկրասարգութիւն, որ
մեծ համոյք է զգում, ընկնում, թէ այս
կամ այն մարդը կաթօլիկ է արդեօք թէ
լուսաւորչական կամ երկրական: Իդուր չէ,
ուրեմն, որ ամեն կողմից պանդաւներ են
թափվում մեր ուսանող և ոչ-ուսանող ե-
րկրասարգութեան բարոյական մեղեւո-
թեան մասին. հասարակական այդ անտուր,
որ սպառնում է մեր գոյութեան հիմքե-
րին, ճիշդ որ սկսել է շատ հրէշաւոր
փաստերով երեւան գալ:

Փաստերը գնալով բազմանում են, ստու-
րանում: Հասարակական օրգանի պարտքն
է արձանագրել կենդանի անպատիւ երե-
ւոյթները, և մենք առանց տատանվելու
մեր ընթերցողների առաջն ենք հանում
Ալեքսանդրովիւմ հաւատարմութիւններ: Հարկ
չը կայ նրանց ամօթալի արարքի մասին
երկար ու բարակ բացատրութիւններ տալ:
Իսկ մի շատ պարզ, տարրական յանգանք
է. և ըստաստանը հէնց այն է, որ մենք
տպագրական խօսքի միջոցով տարածում

31-ին, երեկոյեան, Պարիզի քաղաքային տունը
մի մեծ երեկոյթ են պարահանդէս պէտք է
տար. օգոստոսի 1-ին, միջինտրների նախա-
գահ Վալդէի Բուսսոյի մօտ պաշտօնական մեծ
հիւրընկալութիւն պէտք է լինէր. օգոստոսի
2-ին պէտք է տեղի ունենար մի մեծ բանկէտ,
որ ֆրանսիական մասնուր տալու էր ի պատիւ
կոնգրէսի անդամների, իսկ 5-ին—ընդունելու-
թիւն հանրապետութեան նախագահ Լուրէի
և տիկին Լուրէի մօտ: Գաւառական քաղաք-
ներն ևս հրաւէր էին ուղարկել զանազան
բանկէտներին: Պէտք է յիշել մանաւանդ Մար-
սէլի քաղաքի հրաւէրը, որ մտադիր է մի մեծ
բանկէտ տալ:

Երկուշաբթի, յուլիսի 30-ին, ժամը 5-ին կէ-
սօրից յետոյ, շտապում ենք գնալ լատինական
թաղը, Սորբոնի ամֆիթատրոնի մեծ սրահը,
ներկայ լինելու կոնգրէսի հանգիստաւոր բաց-
ման հանրապետութեան նախագահ Լուրէի
ձեռքով. վերջապէս, մտածում ենք մենք, ա-
ռիթ կունենանք թէ Լուրէին տեսնելու և
թէ նրա ճառը լսելու: Սակայն, ճակատագրի,
ինչպէս ասում են, այլ կերպ էր տնօրինել Այդ
օրը առաւօտեան ամբողջ Պարիզը ցնցվել էր
խաղաղական Ումբերտո թագաւորի սպանութեան
լուրով: Այդ սպանութիւնը ստիպում էր ֆրան-
սիական հանրապետութեան կառավարութեան
ստեղծ պահել և այդ պատճառով միջինտրների
խորհուրդը որոշել էր դադարեցնել բոլոր պաշ-
տօնական հանդէսները և ամսախմբութիւն-
ները, իսկ հրաւէրները, բանկէտները մի մասը
յետաձգել, մի մասը բոլորովին չը կատարել:

ենք եղելութիւնը, որպէս զի ամօթի և
խայտառակութեան գրոշմով կնքվի նա ա-
մեն տեղ...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

VII

Դժբաղդ ամիս էր յուլիսը ուսն ինտելիգեն-
ցիայի համար: Մի քանի շաբաթում իրար և
տեղից գերեզման իջան իշխան Ռուսուօլ, Գրի-
գոր Ջանչեան և վերջը, յուլիսի 31-ին, վա-
ղիմիր Սերգեևիչ Սոլովիօ:

Հայ ընթերցողներին վերջինիս անունը յայտ-
նի կը լինի աւելի չնորհիւ նրա գրքին՝ «На-
циональный вопросъ въ Россіи» («Ազգային
հարցը Ռուսաստանում»), որ մի քանի հրատա-
րակութիւն ունեցաւ, և նրա մի յօդուածին,
որ «Նամակ Արեւելեան հարցի մասին» վեր-
նագրով տպվեց «Նորարարական օգնութիւն» ժո-
ղովածուի երկրորդ հրատարակութեան մէջ:

Այդ յօդուածը, ինչպէս և այն բոլորը, ինչ
որ դուրս էր գալիս հանգուցեալի գրչի տակից,
կրում է նրա տաղանդի և աշխարհայեացքի
որոշ կնիքը:

Եւ ճնշվել եմ, գրում է Սոլովիօյ այդ յո-
դուածի սկզբում, 1853 թ.ին, երբ սկսվեց
այն ուսումնասիրական պատերազմը, որ վեր-
ջացաւ Սկվատոպոլեան պարտութեամբ:
Այսպիսի հասակում ևս վկայ եղաւ այն հա-
սարակական և ժողովրդական շարժման, որ
տեղի ունէր 1877 թ.ին ուսումնասիրական
պատերազմից առաջ և նրա ժամանակ: Ան-
ցեալ տարի հեռուից դիտում էի, թէ ինչ-
պէս Արեւելքում սկսեց մի բան գոյանալ,
բայց չը գոյացաւ: Մարդ զգում է այդ երեք
երեւոյթները—Կրիմի պատերազմի, 1877 թ.
պատերազմի և 1896—97 թ.թ. հայկական
և յունական զործերի—կապը ևս ցանկու-
թիւն է ծագում պարզվել նրանց իմաստը:
Ինչու առաջինը վերջացաւ Ռուսաստանի
պարտութեամբ, երկրորդը—նրա, թէ և ոչ
կատարեալ յաղթանակով, իսկ երրորդից ո-
չինչ դուրս չեկաւ, և մարդկային թշուա-
ռութիւնների չը տեսնված կոտորածներ
վերջ չը ստացաւ ոչ մի պատմական հա-
րուածով:

Այնուհետեւ Սոլովիօյ այն կարծիքն է
յայտնում, թէ արեւելեան հարցը մի կտիւ է
քրիստոնէութեան և մահմեդականութեան
մէջ, և քրիստոնէականներ անդադրութիւնը այդ
հարցում համարում է աստուածային պա-
տիժ նրանց մեղքի և համար: Մեղք ա-

Այդ որոշման համաձայն մասնուի VII միջազ-
գային կոնգրէսի հանգիստաւոր բացումն այլ ևս
չէր կարող տեղի ունենալ նախագահ Լուրէի
ձեռքով:

Սակայն, ժամը 5-ին, Սորբոնի մեծ ամֆի-
թատրոնը լրված է արդէն կոնգրէսի անդամ-
ներով: Պատի պատշաճաբի վրա տեղ են
բնեղ Ալֆրէդ Մէլլէ (անմահներից մինը, ակա-
դեմիկոս), նախագահ կոնգրէսի կազմակերպող
յանձնաժողովի պ. պ. Պոլ Կասանեակ, Ժիլ
Կարբատի, Ալֆրէն Հերբոտ, —այդ յանձնաժո-
ղովի անդամներն և այլ նշանաւոր հրապարա-
կախօսներ: Ալֆրէդ Մէլլէ, ոտքի կանգնելով,
խորին լուծեան մէջ արտասանում է.

«Տիկիւններ և պարոններ.
«Համոզված ենք, որ դուք մասնակից եք
վերջին այն զգալի արդիւնքին, որով համակված են մեր
սրտերը: Մարտափելի ոտքերը, որին զոր հնազ-
նորին մեծութիւն Իտալիայի թագաւորը, լցրել
է մեզ զարհուրանքով: Մենք ամենից շատ
զգացված ենք, այդ դժբաղդութիւնը ամենից
շատ զգալի է մեզ այն պատճառով, որ նորին
մեծութիւնը անցեալ տարի ընդունեց մեզ
միջազգային մասնուի կոնգրէսիստների, Հո-
մոմ մի առանձին բարեհաճութեամբ: Այդ մի
յիշատակ է, որ մենք կը դնենք նրա գերեզմա-
նի վրա, և, տիկիւններ ու պարոններ, վստա-
նոր ձեր ամենի միահամուռ թարգմանն եմ հան-
դիսանում այստեղ, առաջարկում եմ ձեզ ու-
ղարկել Իտալիայի թագաւորական ընտանիքին
և Իտալական ազգին մեր յարգալից համա-
կրութեան զգացումները (բրավո և ծափահա-

տելով, նա ուղում է հասկանալ ոչ անհատական
մեղքերը, այլ հասարակական: Ֆրանսիական
մեծ յեղափոխութեան ժամանակ ֆրանսիական
թագաւորը գուցէ ամենամանեղ մարդկանցից
մէկն էր, բայց այդ յեղափոխութիւնը պատիժ
էր ամբողջ հին լեժիմի մեղքերի համար: Սե-
վաստոպոլեան պարտութիւնը պատիժ էր ու-
սաց նախարէֆօրմեան, ճորտատիրական կազ-
մի համար, իսկ Ալեքսանդր II-ի թագաւորու-
թեան ընթացքում տարած յաղթանակները—
կոկիկաթի նուաճումը, Բոլշաքիայի ազատումը
և այլն—վարձատրութիւն էին ուսն ազգին,
որովհետեւ Սկվատոպոլի պարտութիւնից յե-
տոյ նա զղջաց և փոխեց իր կազմը: Սա-
կայն ամբողջապէս և հիմնովին չը փոխեց,—
դրա համար էլ յաղթանակները կատա-
րեալ չէին: Այնուհետեւ տեղի ունեցաւ մարտի
1-ի սպանութիւնը, որ Սոլովիօյ անուանում
է երեխայական խաղ յեղափոխութեամբ, և
ուսն հասարակութիւնը տարիների ընթաց-
քում պատժվեց այդ անմիտ քայլի համար: Բնո-
րոշելով ներկայ վայրկեանը, Սոլովիօյ ա-
սում է.

«Եթէ մարդ նայէ մեր հասարակութեան
հոգու ներքը, չի տեսնի այնտեղ ոչ պարզ
բարիք, ոչ պարզ չարիք: Կարծէք այն
ստուերները լինեն, որոնց ոչ դժուր է ըն-
դունում, ոչ արքայութիւնը, ոչ էլ քաւա-
րանը: Non ragionar di lor, ma guarda e
passa! կամ ուսներէն՝ Ни Bory чбъга, ни
верты червца (ոչ մոռ Աստուծո համար, ոչ
կրակխանիչ աստանայի համար): Ժորտա-
տիրական և անդատարան Ռուսաստանում
իսկական և անադին կրակխանի կար, և
Աստուծո մոտը վառվում էր այն ժամանակ
պաշտոն կերպով, թէ ևս գրուանի տակ: Իսկ այժմ
—66 թ.երի բարեփոխութիւնները ջարդե-
ցին ստատանայի կրակաշիւղ և հանեցին
Աստուծո մոտը գրուանի տակից: Իսկ այժմ
ոչ մէկն է, ոչ միւսը,—ջարդված կրակաշիւղ
ընկած է ամենքի աչքի առաջ ու ոչ ոք չէ
հաւաքում նրա կտորները, իսկ Աստուծո մո-
տը պահել են ինչ որ մի անկիւնում, թէ և
ոչ գրուանի տակ, այլ ինչ որ անպէտք,
խաւար շիրմայի կտուրում, և հազիւ
հազ է հանում մեզ նրա արտա լոյսը: Այդ-
պիսի արտա վայրկեանները—պատմութեան
դատաստանի յետաձգման վայրկեաններն են:
Նախախնամութիւնը կարծէք սպասում է և
լուծու: Ահա թէ ինչու անցեալ տարի բոլոր
վառելի պատմական նիւթերը նման էին
թաց ցալի և չէին կարող ընկեցնել արե-
ւելեան հարցը: Կոխ քրիստոնէայ և մահ-
մեդական աշխարհների իայց ուր է, ինչի
մէջն է մեր քրիստոնէութիւնը:

րութիւններ) և առաջարկում եմ ձեզ փակել
նիստը ի նշան սուգի: (Նոր ծափահարու-
թիւններ):

Կոնգրէսը անմիջապէս փակում է նիստը:
Այստեղ իմացվում է, որ կոնգրէսի իտալական
անդամները, թուով 35 պատգամաւոր, որոշել
են չը մասնակցել կոնգրէսի պարապուստներին,
ազգային սուգի պատճառով, և վերագառ-
նալ անմիջապէս Իտալիա:

Կոնգրէսի առաջին ընդհանուր ժողովը տեղի
ունեցաւ մասնուի պալիլիօնում յուլիսի
31-ին: Նախագահ Զինգեր, բանալով նիստը,
ցաւ յայտնեց, որ հանրապետութեան նախա-
գահը չը կարողացաւ վշտալի դէպքի պատճա-
ռով անձամբ ողջունել կոնգրէսի անդամներին,
ինչպէս ինքը ցանկութիւնը էր յայտնել, և ցոյց
տալ իր համակրութիւնը մասնուին և նրա
գործիչներին—ժուրնալիստներին, որոնք կազ-
մում են ամեն մի ազգի «առաջապահ գունդը»:
«Մենք պարտաւոր ենք մեր չնորհակալութիւնը
յայտնել պ. նախագահին, և ամենալաւ բանը,
որ կարող եմ անել, կը լինի ինչեցեւէ ձեզ այն
նշանաւոր ճառը, որ խօսեց հանրապետութեան
նախագահը ցուցահանդէսի բացման ժամանակ,
որովհետեւ բոլոր այն գաղափարները, որոնք
կազմում են այդ ճառի հիմքը և զարգը, կա-
տարելապէս յարմար են գալիս մեր համերաշ-
խութեան գործին:

«Մենք ևս—մասնուի գործիչներ—կամենանք
տանել մի վճռական և փառաւոր յաղթութիւն
սխալի և ատելութեան վրա, որոնք, աւանդ,
գտնում են մեր մէջ դեռ հետեւողներ և որոնք

Преподан. ведетен по собств. сочинениямъ.

Այդպէս էր հանգուցեալը իր բոլոր գործունէութեան համարձակութեամբ կրօնական հայեացքներէ պաշտպան փիլիսոփայութեան մէջ, մարդասէր՝ բառի բուն նշանակութեամբ, մարտնչող հրապարակախօս եւ փայլուն ոճագէտ:

Ան հասարակ փայլուն ընդունակութիւններէ տէր էր Վլադիմիր Սօլովիով: Ուսումը լրացրինք, որոնք, առանց կուսակցութեան խորութեան, ողբում են Սօլովիովի մահը, հետեւեալ տեղեկութիւններն են հաղորդում նրա մասին: Վլադիմիր Սերգեևիչ Սօլովիով, որի հայրը յայտնի է իր «Исторія Россіи съ древнѣйшихъ временъ» գրքով եւ եղբայրը նոյնպէս անշուշտ չէ իր փրկասան, ծնվել է 1853 թ.ին: Աւարտելով պատմական-լեզուաբանական բաժնի դասընթացը Մոսկվայի համալսարանում, ուր նա միաժամանակ լսում էր եւ ընդգրկուած ժամանակակից բաժնում (հետեւելով նոյնպէս հոգեւոր ճանապարհի դասընթացին), նա 1874-ին, 21 տարեկան հասակում, մագիստրական դիսերտացիա պաշտպանեց Պետերբուրգի համալսարանում եւ արժանացաւ փիլիսոփայութեան մագիստրոսի աստիճանի, որ, նրա հասակի ի նկատմանով, պէտք է համարել վերին աստիճանի հաջադիւստ, եթէ ոչ եղակի, երեւոյթ: Հետեւեալ տարին նա սկսեց դասախօսութիւններ կարդալ Մոսկվայի համալսարանում իբրեւ դոցէնտ, այնուհետեւ (1877-ին) տեղափոխվեց Պետերբուրգ, պաշտօն ստանալով բնագիտութեան միջնարդութեան մէջ: 1880 թ. նա դիսերտացիա պաշտպանեց եւ ստացաւ փիլիսոփայութեան դոկտորի աստիճան: Երկու տարի էլ դասախօսութիւններ կարդաց Պետերբուրգի համալսարանում եւ կանանց բարձրագոյն (հետազոտական) կուրսերում: 1881 թ.ի մարտ ամսին թողեց պետական պաշտօնը եւ ամբողջապէս անձնատուր եղաւ գրական գործունէութեան:

Հանգուցեալի գրութեանցից, որոնցից մի քանիսը տպւած են արտասահմանում, յայտնի են «Чтение о Богочеловѣчествѣ», «Исторія и будущность теократіи», «L'idée russe», «Национальный вопросъ въ Россіи», «Оправданіе добра», «Судьба Пушкина», «Духовныя Основы жизни», «Право и нравственность», եւ վերջինը «Три разговора о войнѣ, прогрессѣ и о концѣ всемірной исторіи»:

Բայց գրանից հանգուցեալը շատ աչքի ընկնող գրութեանցից ունի, որոնք տպւած են իբրեւ յօդուածներ պարբերական հրատարակութիւններէ մէջ, գլխաւորապէս «Вѣстникъ Европы» եւ «Вопросы философіи и психологіи» ամսագիրներէ մէջ:

Փիլիսոփայութիւնը եւ հրապարակախօսութիւնը Սօլովիովի սիրած ասպարէզներն էին, բայց նա բանաստեղծական գրութեանցի էլ ունի—ստանաւորներ, որոնց ժողովածուն նորերս դուրս եկաւ երրորդ հրատարակութեամբ, եւ մի վրական պատկեր, որ տպւեց «Русская Мысль» ամսագրում 1892 թ.ին («На зарѣ туманной юности»):

Ստանաւորները, ուսն քննադատներէ կարծիքով, ընդհանրապէս թոյլ են, թէեւ գուրկ չեն որոշ արժանաւորութիւններէ: Մի բան

տարբերակ է,—ինչպէս է որ մինչեւ այժմ չէ պարզվել, թէ այդ ստանաւորներէ մի քանիսը, որոնք գրված են ղեկագնչական ուժով, ծագրական են թէ լուրջ: «Русская Мысль» ամսագրի յուլիսեան համարում յայտնի քննադատ Պրոտոպոպով համարում է այդ ստանաւորները ոչ հեղեակեան եւ անմիտ, իսկ նոյն ամսագրի իսկական խմբագիր Գոյցեւ Սօլովիովի մահվան առիթով գրած իր յօդուածում («Урбьеръ») պնդում է, թէ նրանք ծագր են ղեկագնչական հասցէին:

Հանգուցեալը թողել է բազմաթիւ անտիպ գրութեանց, որոնց մէջ եւ Պատմի գործերի թարգմանութիւնն:

Հանգուցեալի ինքնուրոյն աշխատանքները ընդգրկում են համար պէտք էր հիմնովին ծանօթ լինել նրա բոլոր, գոնէ գլխաւոր, գրութեանցին: Նա Այդ պատճառով մենք մեզ անձեռնհաս ենք համարում այդ բանում: Սակայն աւելորդ չէ յիշել նրա մի քանի հայեացքները:

Հանգուցեալը ջերմ պաշտպան էր մարդկային արժանաւորութեան եւ անկախութեան թէ առանձին անհատներ, թէ ազգերի վերաբերմամբ եւ ջերմ հակառակորդ մահվան պատժի: Փիլիսոփայութեան մէջ նա միտով էր եւ մարդկութեան փրկութիւնը տեսնում էր քրիստոնէութեան վերջնական յաղթանակի մէջ, որի համար, ի միջի այլոց, քարոզում էր բոլոր քրիստոնէական դասնութիւնների ի մի ձուլում: Այդ քարոզի համար, օգտվելով նրա համբերող վերաբերմունքից դէպի կաթոլիկութիւնը, շատերը նրան մեղադրեցին պապականութեան մէջ:

Քրիստոնէութիւնը հանգուցեալը այնպէս չէր հասկանում, ինչպէս Տօլստօյ: Ընդհակառակը, նա ատելով ատում էր Տօլստօյի բացիօնական քրիստոնէութիւնը եւ կատաղի կերպով յարձակվում էր մանաւանդ տալստօյական «մի կալ հակառակ չարին» սկզբունքի վրա: Իր վերջին գրութեան մէջ Սօլովիով այդ սկզբունքի պաշտպաններին ջախջախում է բերելով հայկական կոտորածների օրինակը, երբ հակաքրիստոնէական բան կը լինէր անգործ վկայ լինել ծերերի խողովածան, երկրաների նիգալահարութեան եւ կանանց ընտարաբերութեան:

Սօլովիով մտքի ինքնուրոյնութեան եւ ազատութեան կուսակցից էր եւ դէմ էր մի կողմից՝ լուրջ մարդը՝ պահպանողականներին եւ միւս կողմից ընկերավարականներին, որոնք, նրա կարծիքով, ձգտում են միայն ընդհանուր յաղթանակութեան հաւասարութեան («равенство всеобщей сытости»):

Բոլոր ուսումնական հանգուցեալի համարում են անհեղինակաւոր եւ անմեղաբարձ: Բոլոր ուսումնական փիլիսոփայութիւնը, Սակայն այդ փիլիսոփայն էլ չը թողեց ոչ ամբողջացած փիլիսոփայական մի լուրջ սխառնէմ, ոչ էլ փիլիսոփայ աշակերտների մի դպրոց: Ուսումնական, որ գեղարուեստական աշխարհում տուել է հանձարին մօտեցող անհատներ, շատ աղքատ է իսկական փիլիսոփայների կողմից:

S. Յ.

ՆԱՄԱԿ ՂԱԶԱՆԻ ԳԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերին-Աղզան գիւղ, յուլիսի 20-ին
Ինչպէս մեր, այնպէս եւ չրջակայ գիւղերի ազգաբնակչութեան համար, սեփական բժշկութեան հարցը պէտք է հերթական համարել: Բայց այն սովորական բազմաթիւ հիւանդութիւններից, որոնք ծնվել ու ապրում են մեր ժողովրդի հետ, սկսել են երեւան գալ նաեւ այնպիսի սոսկալի հիւանդութիւններ, ինչպէս սիֆիլիսը, որոնք դէպի անկումն են տանում նրան, որ օրի վրա աւելի մեծ ծաւալ ստանալով:

Երկու տարիների փորձն ու խրատը սովորեցրել է մեր գիւղացիներին զանազան միջոցներ ստեղծել առաջին տեսակի հիւանդութիւնների դէմ, որոնց նա գործ է դնում իր դաւաբանների եւ ջառանգների ձեռքով, սակայն նոյնը չէ կարելի ասել վերնախաւի ախտերի վերաբերմամբ: Ծառ քիչ, յաճախ եւ ոչ մի հասկացողութիւն չունենալով նրանց մասին, գիւղացին մնում է շուտաւաճ, կանգնած, երբ իր համար բոլորովին անսպասելի կերպով ենթարկվում է նրա կործանող հարուածներին, երբ տեսնում է իր տան աստիճանաբար աւերումը:

Գոյցէ մենք կասենք.—չէ որ կայ գիտութեան մի ճիւղ—բժշկութիւնը, որ հնաշալի կերպով կուլել գիտէ այդ չարիքի հետ, ինչու չեն այդ մարդիկ նրան դիմում, նրանից օգտվում: Բայց հազիւ թէ ճիշտ լինի մեր այդ տրամաբանութիւնը: Վերջինքնք հենց մեր գաւառը.—նա կազմված է մի քանի տասնակ մեծ ու փոքր գիւղերից, ընկած իրարից աւել կամ պակաս հեռավորութեամբ, բաժանված իրարից յաճախ սարերով ու անտառներով, եւ սակայն նա ունի միայն մի հիւանդանոց իր բժշկով: Աւելացրէք եւ այն, որ եթէ մի ազգանցի կամ քարվանսարից կամենայ բժշկի հրաւիրել 35—40 վերստ հեռու Լազարի քաղաքից, նա առնուած պիտի 15—20 րոպէի ծախսէ, չը հաւանք իր 2 անգամ անտեղ գնալը: Իսկ այդ գիւղերը դեռ կենտրոնումն են, ինչ կը լինի հապա աւելի հեռու գիւղերի դուրս: Ի՞նչ անէ ուրեմն այն գիւղացին, որ սար ու քաղ ընկնելով իր ընտանիքի չոր հացը հազիւ է հայթայթում, պաշխատի տուկոտները հազիւ է հասնում: Ծառ մի միջին այն գիւղացիք, որոնք դրանից աւելի բաղաւոր կենքի պայմաններ տեսն: Այստեղ ուրախութեամբ պիտի արձանագրել, որ չը նայելով այդ դժուար պայմաններին, յաճախ խեղճերը, յանձն առնելով այդ գաղթի գրկանքները, բժշկի են հրաւիրում, թէեւ արդէն ուշ, այն ժամանակ, երբ գնալով ոսկրին է հասնում, երբ բժիշկն այլ եւս անգործ է օգնելու: Պէտք է մեղադրել միթէ գիւղացուն:

Բոլորովին այլ բան է, եթէ գիւղացին հարուածնայ հիւանդութեամբ բժշկի գիմնու, նրա խրատները լսելու, առանց նիւթական ու բարդական մեծ զրկանքների, այնուհետեւ այլ եւս տեղի չեն ունենալ այն բազմաթիւ աղէտները, որոնցով լինէր է մեր գիւղացոց տարեգրութիւնը եւ որոնք արդիւնք են մերթ գիւղացու աղիւտութեան եւ մերթ արհեստական պայման-

վճարը: 4) ստեղծել մի միջազգային համառօտ code (կանոնադիր) մամուլի հեռագիրների համար: 5) հաստատել միջազգային նոր պայմանագրեր, որոնք նոր ղեկավարներ անէին մի երկրից մի այլ երկրի ուղարկվող մամուլի հեռագիրների վճարի համար: 6) Լիսաբոնում 1898 թ. գումարված մամուլի միջազգային միջնորդ դատարանի պաշտօնավարութեան մասին զեկուցում: 7) քննութիւն զանազան երկրների ժուրնալիստների սօցիալական, բարոյական եւ նիւթական վիճակի մասին, պաշտօնի (պրոֆեսիոնալ) տեսակէտից: 8) Լրագիրների քրէական եւ քաղաքացիական պատասխանատուութեան հարցը: 9) Լրագրական դպրոց (Ecole du journalisme) հաստատելու հարցը:

Բոլոր այդ հարցերի մասին տպւած գեղույնագիրը բաժանվելիս կօդերէս անգամներին քննութեան համար:

Առաջին հարցը, այն է, որ ամեն մի լրագրի աշխատակիցները եւ թղթակիցները մասնակցեն հրատարակութիւնից գոյացած զուտ արդիւնքին, վաղուց է, որ արժարժված է եւրօպական մամուլի մէջ: Ինչպէս յայտնի է, Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում մասնակցութեամբ է կամ նշանաւոր կապիտալիստների կամ ակցիոնէրական մեծ ընկերութիւնների ձեռքում: Նրանք, որոնք իսկապէս ստեղծում են լրագիրը, առաջ են տանում քաղաքակրթութիւնը, ղեկավարում են հասարակաց կարծիքը—խմբագիրները, աշխատակիցները, թղթակիցները—մեծ մասամբ, ամենա-

ների Մեր գիւղերից եւ ոչ միւր հար չունի բժիշկ որոնելու, բայց ինչ որ անկարելի է լինում իրագործել միայնակ, նա հեշտութեամբ է գրուի գալիս ընկերովի,—միացած ուժը հրաւիրում է: Եւ մեր գիւղերից՝ Վերին եւ Ներքին Աղզանը, Քարվանսարան, Թալան, Քրդեանը, Սեւ-Քարը, Աչա-Ջուրը, Ռեւազին եւ Սար-հատունը եթէ միանան, առանց մեծ զոհաւորութիւն զգալու կարող են ունենալ թէ հիւանդանոցի եւ թէ բժիշկի, այդ գիւղերը միացան եւ կազմում եւ իրարից հեռու են հագի 2—5 վերստով: Դրանցից Քարվանսարան իր անտեսական յարմարութիւններով հեշտ կարող է իր մէջ աւելի հիւանդանոցն ու բժիշկը: Միակ զոհաւորութիւնը, որ կայ այդ կարեւոր խնդիրն իրականացնելու համար, դա բարի կամքն է...

Յ. Բ. Ստոիկանց

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալեքսանդրօպօլ, օգոստոսի 9-ին
Խնարհաբար խնդրում ենք Մշակիչ մօտակայ համակարգի մէջում տեղ տալ մեր այս երկրորդին:

Յուլիսի 31-ին, Դիլիջանից Ալեքսանդրօպօլ եկաւ մեր համալսարանը երաժիշտ պ. Կարա-Մուրզա եւ, իրան յատուկ եռանդով կազմելով երկու սեռի սիրողներից մի ստուար խումբ, սկսեց պատրաստել յայտարարելով, որ ամսին 6-ին լինելու է իր համերգը: Աֆիշները կապարած էին պատմիչին, խումբը արդէն պատրաստ էր, եկաւ եւ վերջին կրկնութեան օրը... բայց այդ վերջին կրկնութիւնը ճանաչաւ բարոյութիւնը: Խնդիրն եղաւ լսելի համար: Պ. Կարա-Մուրզա, հիւանդ ու վատ, պիտանոյի հրաւիրակցով դաժիճ հրաւիրեց խմբի անտեղեակ անդամներին, երկու տուկը Մեր հայրենիքը եւ Անի քաղաքը: Խնդիր ու պատշաճ երգեր, եւ ապա կանգնելով, լսելով ու ընկճված սրտով յայտնեց, որ համերգը չի կայանայ իր հիւանդութեան պատճառով...

Ի՞նչ տարօրինակ հիւանդութիւն, պիտի հարցնէ ու չափի ընկերացիքը, որ թոյլ չէ տալիս մարդուն մի ամբողջ շարքով չարաբանքը մի չորս ժամի չարաբանքով եւս պատկերու: Այն, տարօրինակ հիւանդութիւն, տարօրինակ մանաւանդ իր չար ժառիթներով, որոնց համար եւ մենք բարոյական պարտականութիւն համարեցինք դիմել ձեզ, հասարակութեան ամօթաբեր վարժուողը զղուանքի զգայմունքով արձանագրելու:

Պ. Կարա-Մուրզա դիմեց քաղաքային ժողովարանի վարչութեան, խնդրելով ամառային դաժիճ համերգի համար, եւ չը նայելով առաջարկած ձեռնարկ պայմաններին, նրան մերթ խեղճ կանաչ սեղանի երկրպագուները: Երբ այն օր նա օտարված էր բաւականապէս Մ. Փրկիչի դպրոցի դաժիճով: Բայց... անհ Նոր փոփոքիլի քաղաքում բռնկում է մի չը տեսնված ու յոյսաւ ագիտացիա, առաջ է գալիս հին հաւանքը կաթօլիկ Կարա-Մուրզայի դէմ: Այդ ագիտացիայի գլուխ են անցնում զանազան ճիւղափայտեր ու խաւար մտքեր իրեն կարողութեամբ արձանագրող, եղբիւր ճարտիւտութեամբ արձան պատանջող քաղաքացուն համոզում են չը գնալ կօնցէրու: Եւ, յաւով պիտի ասենք, որ այդ նրանց աջողվեց, մինչեւ կօնցէրուի նախընտրել երկուսն մի հատ տոնակ էլ չէր ծախվել... Եւ շատ պարզ է, քանի որ այդ միանգամայն վայրենի ագիտացիայի թեւ ու թիկունք էր դարձել Ալեքսանդրօպօլի երի-

չնչին վարձատրութիւն են ստանում, իսկ նրանց ճակատի դառն քրտնքի արդիւնքով հարստանում, միլիոններ են դիզում մարդիկ որոնք որ եւ է կապ չունեն մամուլի հետ: Դա վրդովեցողիչ անարդարութիւն է, մինչ այն հոյակապ անարդարութիւններից, որոնք իրանց արդարացումը գտնում են «առաջարկութիւն» եւ պահանջ կողմած քաղաքացուական գրութեան մէջ: Երբեք այդ վիճակը մեծապէս վնասում է եւ մամուլի մաքրութեան, բարձր եւ վեհ կոչման, որովհետեւ լրագրի ուղղութիւնը կախված է լինում ոչ թէ նրա խմբագիրներից, աշխատակիցներից, այլ նրանցից, որոնք միակ նպատակն է մամոնի ղեկիդէնտը: Գրաւաճառութիւնը, կաշառակութիւնը այդպիսի լրագիրների համար սովորական երեւոյթ է եւ այդ երեւոյթը ամենից շատ սովորական է ֆրանսիական մամուլի մէջ: Այդ անգործ չարիքի առաջն առնելու համար կայ մի արմատական միջոց—ստեղծել այնպիսի կարգ ու կանոն, որ լրագրի վարչութեան եւ կառավարութեան մէջ հաւասար ձայնի իրաւունքով մասնակցեն նրան ստեղծողները, նրան հոգի եւ կանք տուողները: Դժբաղդաբար, այդ հարցը, որ իմ կարծիքով ամենակարեւորն էր եւ, ինչպէս ասում են ֆրանսիացիները, կարելի էր կօդերէս մեկը համարել, մնաց անընթեղ եւ նոյն իսկ լուրջ քննութեան չենթարկվեց, իբրեւ մի շատ բարդ եւ անիրագործելի հարց:

(Կը շարունակվի)

ՍՕՖԻԱ: «Բարձրագույն գործակալութիւնը»
անհիմն է յայտարարում բարձրագույն գործի
մարմինը յայտարարում տարածված լուրը: Կա-
ռավարութիւնը, ազգայնականութիւնը եւ մա-
մուլը բոլորովին հանգիստ են պահում իրանց
բովանակման դէպքերի վերաբերմամբ:

Նիւ-Եօրկ: Շանդհայի հեռագրում են, թէ
գրութիւնը եւանջելի հովանու քանի դուռ ա-
ւելի կրիտիկական է դառնում: Չինուորական
չորսանքի կարծիքով 15,000 զօրք է հարկա-
ւոր Շանդհայը պաշտպանելու համար: Անհրա-
ժեշտ է պնդել, որ կառավարութիւնը անյա-
պաղ օգնական զօրքեր ուղարկէ: Այս հեռա-
գիրը յանձնված է արտաքին գործերի մինիս-
տրութեան:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Մակ-Կլինէյ խորհրդակցու-
թիւն ունէր Չափիի աջն հեռագրի վերաբե-
րութեամբ, որ չէ հրատարակված: Լուրերին
նայելով Չափիի ասում է, թէ դեռ հարկ կը
լինի նշանաւոր կոնքեր ունենալ Պեկինի չըր-
կապում եւ Պեկինի ու ծովափի միջեւ,
ուստի եւ չէ կարելի, նոյն իսկ մոտաւորապէս,
որոշել ժամանակ նշանակել ամերիկական
զօրքերը հեռացնելու համար:

ԼՕՆԴՕՆ: Ծովապետ Բրիւս հեռագրում է
Տակուից, թէ օգոստոսի 6-ին Տեանձինից 6
մղոն հեռու, հարաւարկում, սեղի ունեցաւ
թեթեւ կոր:

ԲԵՐԼԻՆ: Լի-Սունգ-Չանգի առաջարկութեա-
նը անպաղաժ դաշնակից զօրքերը հեռացնելու
եւ խաղաղութեան բանակցութիւններ սկսելու
մասին գերմանական կառավարութիւնը պա-
տասխանեց, թէ որովհետեւ Լի-Սունգ-Չանգ
կարեւոր լիազօրութիւններ չունի չինական
կառավարութեան կողմից, ուստի եւ նա չէ
կարող բանակցութիւններ սկսել նրա հետ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Ծովապետ Բէմը հեռագրում է
օգոստոսի 7-ից, թէ ամերիկական հեծեակների
6-րդ գումարը եւ մօտ 400 անգլիացիներ ու
եւրոպացիներ երէկ առաւօտեան ցրվելին 1000
մարդուց բաղկացած մի զորաբաժին, որ գտնու-
վում էր Տեանձինից 8 մղոն հեռու:

ԼՕՐԵՆՏՈ-ՄԱՐԿԵԶԷ: Կրիզէր հրատարակեց
մի յայտարարագիր, որ նկատվում է իբրեւ
պատասխան Բոքսթոնի յայտարարագրին: Նրա
մէջ ասված է, թէ անօգուտ է գնալ թափ լինել,
որովհետեւ Բոքսթոն իր յայտարարագրի մէջ
յայտնում է, թէ բոլոր բռնիքներ, որոնք 12
տարեկանից մեծ են, կը համարվեն պատերազ-
մական զերբներ եւ կուղարկվեն ա. Հեղինէի
կղզին. անօգուտ է նոյնպէս, որ բռնիքներ թող-
նեն իրանց զորաբաժինները, որովհետեւ քանի
նրանք մօտեան իրանց ազգաբանիքներն, այնքան
աւելի մօտ կը լինեն կղզուն:

Խաբաբի: ԱՆԷՔՍԱՆԴՐ ԲԱՆԱԹԱՐ
Հրատարակիչներ: ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԻ-ԱՂԱՄԱՆԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՄՆԵՒԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնյովի արձանի հանդէպ)

ԱՄԵՐԻԿԱՆ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԻԳ:
ԱՌԱՌՈՏԵՐԸ

Բ. Ն. Նախասարգեան—11—12 ժ. վարձու-
թեան, վերականգն (սիֆիլիս) եւ միզապատ. հիւանդ.
Կ. Մ. Զիլիովան—9—10 ժ. աչքի, ներքին եւ
նեարակի հիւանդ.

Բ. Ֆ. Գրոսմանի—12—1 ժ. ակնաշիւ, քթի, կա-
կոր դի եւ կրծքի հիւանդ.

Զ. Բ. Բարանսկանց—11—12 ժ. կանանց եւ երե-
կայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1 1/2 ժ. ներքին եւ երե-
կայոց հիւանդ.

Բ. Ֆ. Գրոսմանի—6—7 ժ.

Բ. Ն. Նախասարգեան—7 1/2—8 ժ.

Վճար 50 կ. չքաղերէր ճրիւղ համախորհրդի (Կոն-
սիլիումի) եւ օպերացիայի համար տասնմէկ.

Օ. Տ. Առվալանցի—տանը, ծաղկահատ եւ բժշ-
կական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.

Հիւանդանոցի վերանորոգ. ԲՈՒԿԱՅԵ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ՀԱՐԿԱԽՈՐԵՆ

Երկու Ուսուցիչներ

որոնցից ամեն մէկը պէտք է դասաւանդէ եր-
կու ուսումնարանում կրօն եւ հայոց լեզու:
Մէկը ժող. լուս. միջնարդ. միջնակարգ եւ երկ-
րորդական ուսումնարանում կուրսնայ չարաթա-
կան 30 դաս 700 ր. ուսմանով, իսկ միւսը—
24 դաս երկու միջնակարգ դպրոցներում՝ 550
ր. ուսմանով: Բացի ուսմանից ուսուցիչները ոչինչ
չեն ստանալ: Պահանջվում է կարեւոր ցէնդ-
մանկացողները պէտք է լինել որպէս ին-
քանց իսկուսնականներ կամ նրանց վաւերացրած
պատճենների հետ այս հասցէով: Գորոշեմու
Տարօշ գործ. Ս. Կրեստ Տարօշեմու
Գործարար. 2—3

ԱՐԻՍՏԱՆԵՍ ԵՐԵՄԵՅԵՎ
ԲԱՆԱԹԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԲԱՆԱԹԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԳԻՆԵՆ 1 Բ.

Թիֆլիսում դիմել—Կենտրոնական եւ Չաք.
Գրիգորեանցի գրաւաճառանոցներին, Ֆոյնպէս
եւ Ալեքսանդր Ստեփանեանցին (Չաքայովի
գրաւաճառարանում): (Կ. հ. չ.) 1—10

Բարձրագույն ուսումն. Ռուսաստանում ա-
ւարտած, միջնակարգ դպրոցում դասաւու-
թեանը փորձված մի հայ երիտասարդ ցանկա-
նում է ուսուցանել հայոց թեմական դպրոցնե-
րից մէկում կամ ձեռնարանում: Հասցէ. Թիֆ-
լիս, Սուդեբնայա, № 25, Ալեքսանդրովի տուն,
բնակարան Միխայիլ Աստապուրով. (Կ. հ. չ.) 1—3

ՋԵՅԹՈՒՆԻ
ԱՆՏԵԱՆԵՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԷՆ
գրքի սկզբում ստացված սակաւաթիւ օրինակ-
ները սպառված են: Երբ ստացվեն նոր օրի-
նակներ, կը յայտարարվի: (Կ. հ. չ.) 1—2

Ա. Է. Բ. Ս. Պ. Օ. Պ. Օ.
ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ ԳՐԱՎԱՅԱՐԱՆՈՑՈՒՄ
Վաճառվում են.

Պ. Կ. Կոստանեանի բոլոր աշխատութիւն-
ները. գրաւաճառանքներն . . . զեղջ 20%
Տիկին տ. Կոստանեանի բոլոր մանկական
գրքերը զեղջ 20%
Կրպ. Պատկերներ իւրանքի, 96 երես,
գինը 20 կ. զեղջ 30%
Բերական կամ Ալեքսանդրովի, աղօթքների
նոր յաւելումով, 42 երես, գինը
10 կոպ. զեղջ 50%
100-ից աւելի գիրքերը 100-ին կը
վճարեն 3 ր. 50 կ.
Դիմել Ալեքսանդրովի, книгопродавцу
3—3 (Կ. հ. չ.) Տեփանչու.

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
ԲԱՆԱԹԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունվում են երեխաներ եւ պատրաստվում
օրիորդաց եւ տղայոց դիմագրայի, բնական
դպրոցի եւ այլ ուսումնարանների համար:
Մանկական պարտէզի նպաստին է կրթել
երեխաներին (4—7 տարեկ.) ֆրէբելեան սիս-
տեմով: Ընդունվում են գրչերթիկ եւ կրտս-
գրչերթիկ երեխաներ: Մանկական պարտէզի
եւ ուսումնարանի մանրամասն ծրագիրը կա-
րելի է ստանալ օգոստոսի 20-ից, Բագուում: 6—8

Դ Պ Ր Ո Ց
տիկ. Կառ. Լիսիցեանցի

Երկու սեռի մանուկներ համար: Իրանց
պարտաւորութիւնը իր հարազատ երեխաների հետ
Ընդունվում են սանձաւարկութեամբ: Սեպտեմ-
բերից բացվում է նաեւ պանսիօն: Դիմել—
օգոստոսի 26-ից—Բնակարան փողոց (Նախ-
կին Սաքովայա), սեփ. տ. № 29): (Կ. հ. չ.) 11—25



ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Յ. ՂԱՐԱԳԵՕՋԵԱՆԻ

(Գոյ. VIII-րդ տարին, Николаевская ул., д. № 33).

Աշակերտներն ընդունվում են 7—15 տարե-
կան հասակի՝ իբրեւ գրչերթիկ ու երթեւեկ-
ների նախապատրաստութեան եւ բոլոր պետա-
կան դպրոցները մտնելու համար, այն է՝ գրի-
նադրանքի, բնական, վաճառականական եւ
ուրիշ պետական դպրոցներ: Դպրոցում աւանդ-
ւում են հայոց լեզու, կրօն եւ այլ առարկա-
ներ: Գրչերթիկ աշակերտները այս տարի ա-
ւելի բաւ պայմանների մէջ գրված կը լինեն:
Թէ ուսման եւ թէ դաստիարակութեան տե-
սակէտից, պիտի աւանդվեն նոր լեզուներ,
աւելի գործնական կիրաւարանք տալով առար-
կաներին: Վճարը չափաւոր է՝ ըստ համաձայ-
նութեան: Երկու երթեւեկ եւ մի գրչերթիկ
կընդունվեն ձրի օրը, չքաւոր երեխաներից
դպրոցի կառավարչի բարեմիտ ընկերների վը-
կայութեամբ: Զ. Ղարագեօրեան
(Կ. հ. չ.) 3—3

Ա. Փրիգոնեան եւ Ընկ. քանկային գրասենեակը
Ապահովանում է ներքին փոխառութեան վիճակաւորի տոմսերը ցնոր տնօրէնութիւն.
I կարգի ամեն մէկ տոմսը 1901 թ.ի յունվարի 2-ից 2 ր. 10 կ.
II » » » » 1900 » սեպտեմբերի 1-ից 2 » 25 »
III » » » » 1900 » նոյեմբերի 1-ից 1 » 60 »
Բացի 15 կոպէկ մարկան, որ աւանդում է ամեն մէկ անդորրագրից:
Գրասենեակը ապահովացումն հեռագրով եւ վերադիր վճարումով չէ ընդունում: (Կ. հ. չ.) 1—3

Ֆինանսների միմիատրի քոյուուրեանը
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Бакы, Прачешная, домъ Теръ Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ուսնողներին մասնագիտական-առեւտրական կրթու-
թիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողներն ստանում են ա տ ա ն ե ռ :
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուա-
բանութիւն համրիչի վրա, 2) Հաշուապահութիւն՝ արդիւնարեւական-գործարանական,
առեւտրական եւ բանկային, 3) Առեւտրական թղթակցութիւն, 4) Առեւտրական անտե-
սագիտութիւն, 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ, 6) Գեղարքութիւն եւ ա-
րագագրութիւն (ուղղումն ձեռագրի):
Ընդունվում են անպատեմներ 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ եղբ. Ծովանեան
եւ Ընկ. ԲԱԳՈՒԻ Բաժանմունքում: Կուրսերի կանոնադրութիւնը (УСТАВЪ) եւ
մանրամասն ծրագիրը—արվում եւ ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները
գրում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспа-
рову. (Կ. հ. չ.) 14—25

II ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԽՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
Ա. ԴԵԱՉԿՈՎԱՅԵԱՆ
ՊՐՕԳՐԱՄԱԶԻԱԿԱՆ ԴԱՍԸԼԹՈՑԲՈՎ

Կովկասեան ուսումնարանական չրջանի պ. հոգաբարձու թոյլտութեամբ՝ այս տարվայ
սեպտեմբերին եւ բաց եւ անում II կարգի մասնաւոր դպրոց աղջիկների համար եւ ուսում-
նարան՝ երկու սեռի երեխաներին պատրաստելու միջնակարգ դպրոցների ստորին դասարաննե-
րի համար՝ աղջիկների պանսիօնով: Յայտարարութիւններ մտնելու մասին ընդունվում են ա-
մենայն օր, առաւօտեան 8 ժամից մինչեւ 1-ը, ուսումնարանի չինութեան մէջ, որ գտնվում է
Երիտասարդական փողոցում, բժիշկ Սամոյլովի տանը, № 154: (Կ. հ. չ.) 2—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖԱՆԱՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու
շաբաթ մի անգամ:
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս: Մեկնում է
Բաթումից չորեքշաբթի, 16/29 օգոստոսի ՍԻՐԿԱՆԻ չորեքշաբթի, նաւագնաց ԳԱՐԻԿԻ, եւ աւս-
պէս չարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից լետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են օրովականից
պակաս գներով:
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի Կ. Անուպէրպէնի մէջ, ընդու-
նելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու հա-
մար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:
ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր ԴՆՆՈՒՄ, Նաբէրէժնայա: ԹիֆլիսԻՄ—պ. Ս. Գ. Բարե-
կնդանեանին, Սիմի փող. Խօջափարութիւնի եւ Մայրութեան թաղի մարմնաւարտ: ԲԱԳՈՒԻ—Եղբ.
Վ. եւ Ի. Մուրֆախեաներին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՕՐՈՍԻ-
ՍԻՑԿԱ—Վաղիկաւազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Կ. հ. չ.) 19—20

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒՍԵՆԻՒՆԱՆՉԱՆՑՀԱՄԱՐ
ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ
երկու սեռի անձանց եւ պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ:
Աւարտողները ստանում են ա տ ա ն ե ռ :
Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական
Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի եւ բանկային), 4) Թուաբանու-
թիւն համրիչի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական եւ մուրհակի կա-
նոնադրութիւն եւ 7) Գեղարքութիւն, վատ ձեռքի ուղղելու:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունվում են սեպտեմբերի 1-ից, ա-
մենայն օր, առաւօտեան 10-ից մինչեւ 11-ը, եւ երեկոյեան 4-ից մինչեւ 8 ժամը, կուրսեր
հիմնողի բնակարանում, Սոյուզուով, Ալեքսանդր Փրիգոնովի տանը № 9, Սեպտեմբրկայա
եւ Լեւոնտովկայա փողոցների անկիւնում: Մրցորդի եւ կանոնների կարելի է ստանալ
ձրի ապէս եղբ. Ծովանեանի բանկային գրասենեակում եւ կուրսեր հիմնողի բնակա-
րանում: Օտարաքաղաքացիք գրում են՝ Тифлисъ, С. П. Мануэляну, (Կ. հ. չ.) 14—25

Лучшія аттестации отъ учебного начальства.
И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.
преподаетъ
Полный курсъ БУХГАЛТЕРІИ
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:
1) Бухгалтерія (двойная итальянская), 2) Коммерческая ариметика,
3) Коммерческая экономія, 4) Ариметика на счетахъ, 5) Торговья и
вексельныя узаконенія и 6) Коммерческая корреспонденція.
Курсъ 3-хъ мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручатель-
ство и гарантія за успѣхи. Божѣ 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.
Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продаваемымъ
во всѣхъ книжныхъ магазинахъ.
Начало занятій съ каждаго перваго числа мѣсяца. 13—20
Годъ занятій одиннадцатый.